ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ գյուղատնտեսության նախարարի

Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ 5

2011 թվականի հուլիսի 13 -ի

N 135 -Ա հրամանով

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 21,01,2005 թ.
գրանցման թիվ 38.210.01559
վկայական 03 Ա-066766
հարկ վճարողի հաշվառման համար 04704343

„21" 01 2005թ.գրանցված
թիվ 003.3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
տարածքային բաժնի կողմից
„14" 07 2011թ

S/Բ պետ՝

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
<<ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. 1-ին կետը լրացնել 3-րդ նոր պարբերությամբ հետևյալ բովանդակությամբ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 673 որոշմամբ <<Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանվել է <<Երկրագործության գիտական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության>>

2. 4-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

<< 4. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության <<Երկրագործության գիտական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ ՀՀ ԳՆ ԵԳԿ ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ << Научный центр земледелия>> государственная не коммерческая организацня министерства сельского хозяйства Республики Армения

ռուսերեն կրճատ՝ НЦЗ ГНКО МСХ РА

անգլերեն լրիվ՝ <<Scientific Centre of Agriculture>> state non-commercial organization of the Ministry of Agriculture of the Republik of Armenia.

Անգլերեն կրճատ՝ SCA SNCO MA PA>>

3. 8-րդ կետի <<գ>> և 10-րդ կետի <<ա>> ենթակետերից հանել <<և բույսերի պաշտպանության>> բառերը.

4. ուժը կորցրած ճանաչել 8-րդ կետի <<ե>> ենթակետը

Հավելված 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

ՀՀ Գյուղատնտեսության

նախարարության 2004թ.

օգոստոսի 11-ի N-171-Ա հրամանով

ՏՊԱԳՐՎԱԾ է

ընդամենը ----5---- օրինակ

օրինակ ----5----

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀՀ իրավաբանական անձանց

պետական ռեգիստրում

«21», 01 2005թ.

Գրանցման թիվ 38.210.01559

Վկայական 03Ա-066766

պետական ռեգիստրի Վաղարշապատի տ/բ

պարոն Վ. Վանյան

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» պետական միակ բաժնետիրական ընկերությունը (ՀՀ պետական ռեգիստրում գրանցման համար՝ 38.140.00861, գրանցման ամսաթիվ՝ 05 նոյեմբերի 1996թ., վկայական համար 01Ա029370) «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թ. ապրիլի 14-ի N 631-Ն որոշմամբ վերակազմակերպման ձևով վերակազմակերպվել է «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն»պետական ոչ առևտրային կազմակերպության, որը համարվում է նրա իրավահաջորդը:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) գիտական պետական ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է:

2.Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ու «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, այլ օրենքներին և իրավական ակտերին, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կանոնադրությանն ու սույն կանոնադրությանը համապատասխան:

3. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, կարող է ունենալ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

4. Կազմակերպության անվանումն է՝

հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն,

հայերեն կրճատ՝ ՀՀ ԳՆ ԵԲՊԳԿ ՊՈԱԿ

ռուսերեն լրիվ՝ „ Научный центр земледелия и защиты растений „ государственная не коммерческая организация министерства сельского хозяйства Республики Армения

ռուսերեն կրճատ՝ НЦ ЗЗР ГНКО МСХ РА

անգլերեն լրիվ՝ „Scientific Centre of Agriculture and Plant Protection„ state non-commercial organization of the Ministry of Agriculture of the Republic of Armenia.

անգլերեն կրճատ՝ SC APP SNCO MA RA

5. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ ք.Էջմիածին, Իսի-Լե-Մուլինո 1:

6. Կազմակերպությունը ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

## II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

7. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն իր մասնագիտացմանը համապատասխան գիտական, գիտատեխնիկական հետազոտություններ, գիտակրթական աշխատանքներ կազմակերպելն ու իրականացնելն է: Իր վրա դրված խնդիրների իրականացման համար կենտրոնում մշակվում է գիտական գործունեության աշխատանքների թեմատիկան, հետևում պլանային թեմաների նյութատեխնիկական և ֆինանսական ապահովվածությանը:

Կազմակերպությունն իր առջև դրված խնդիրները լուծելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է գիտական և գիտատեխնիկական գործունեություն:

8. Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնական ուղղություններն են՝

ա) գիտահետազոտական ծրագրերի որոշումը,

բ) գյուղատնտեսական գիտական ուսումնասիրությունների կազմակերպումը,

գ) երկրագործության և բույսերի պաշտպանության համակարգի կազմավարական պլանի մշակումը,

դ) ագրոլանդշաֆտային բնապահպան, երկրագործության, բուսաբուծության, անասնաբուծության զարգացման տեսական և գործնական հիմնահարցերի գիտական մշակումը, փորձարկումը և ներդրումը, կենսատեխնոլոգիական մեթոդներով կարտոֆիլի և այլ մշակաբույսերի, ցորենի, գարու և բազմամյա խոտաբույսերի բարձր բերքատու սորտերի բուծումը և ներդրումը,

ե) գյուղատնտեսական մշակաբույսերի, բազմամյա տնկարքների մոլախոտերի դեմ պայքարի ինտեգրացված համակարգերի մշակումը և ներդրումը,

զ) գյուղատնտեսության բնագավառում խորհրդատվական ծառայության կազմակերպումը:

9. Կազմակերպությունը կարող է համագործակցել հայրենական և միջազգային գիտական կազմակերպությունների հետ, ինչպես նաև մասնակցել նրանց կողմից հայտարարված մրցույթներին:

10. Կազմակերպությանը թույլատրվում է իրականացնել հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակները՝

ա) գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին, անհրաժեշտության դեպքում, գյուղատնտեսական մշակաբույսերի ռոտացիայի, սերմնաբուծության և բույսերի պաշտպանության ուղղությամբ վճարովի խորհրդատվական ծառայության մատուցում,

գյուղատնտեսության բնագավառի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների ուսումնական պրակտիկաների կազմակերպում:

11. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթն ուղղվում է կազմակերպության կանոնադրական խնդիրների իրականացմանը:

12. Կազմակերպությունը կարող է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

## III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, Հանրապետության գյուղատնտեսության նախարարը (այսուհետ՝ նախարար) տնօրենը:

14. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) կազմակերպության հիմնադրումը,

բ) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

դ) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

15. Նախարարը՝

ա) իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է դրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար,

բ) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը ու դրա մեջ փոփոխությունների կատարումը,

գ) հաստատում է կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը,

դ) սահմանում է կազմակերպության կառավարման համակարգը,

ե) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է նրա կառավարման մարմինները և վաղաժամկետ դադարեցնում դրանց լիազորությունները,

զ) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության գործունեության նկատմամբ,

է) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները,

ը) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

թ) իրականացնում է վերահսկողություն կազմակերպությանը ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

ժ) օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս կազմակերպության գույքի օտարման կամ արձակալության հանձնման համար,

ի) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողովն ու հաստատում լուծարման հաշվեկշիռը,

լ) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

16. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ կազմակերպության տնօրենը, որին նանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարեցվում են) նախարարը:

Տնօրենը օրենքով, հիմնադրի և նախարարի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում կավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը և կրում

պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ նախարարի որոշումների, սույն կանոնադրության ու կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

17. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում գործարքներ,

բ). Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի ու նախարարի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

գ) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

դ) հայտարարում է գիտական ստորաբաժանումների ղեկավարների և գիտական աշխատողների թափուր տեղերի համար մրցույթներ,

ե) պլանավորում և իրականացնում է գիտական կադրերի պատրաստումը, աշխատողների պարբերաբար (առնվազն յուրաքանչյուր 5 տարին մեկ անգամ) հետեստավորման անցկացումը,

զ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքներ և կարգապահական տույժի միջոցներ,

է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

թ) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

ժ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ի) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող կազմակերպության մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

18. Կազմակերպությունը ունի գիտական խորհուրդ: Կազմակերպության գիտական խորհուրդն այդ կազմակերպության գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող կոլեգիալ մարմին է, որը քննարկում է կազմակերպության գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում հաշվետվություններ կարևորագույն գիտահետազոտական և մեթոդական աշխատանքների արդյունքների մասին:

Կազմակերպության գիտական խորհուրդը կազմում է խմբագրական-հրատարակչական պլաններ և աջակցում տպագրության երաշխավորված աշխատանքների հրատարակմանը:

Կազմակերպության գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

Գիտական խորհուրդը կազմված է 15 անդամներից:

## IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

19. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից նրան հանձնվող, ինչպես նաև պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռքբերված գույքից:

Կազմակերպության հիմնադիրը չի կարող որպես սեփականություն հանձնել նվազագույն աշխատավարձի 10 հազարապատիկից ավելի արժողությամբ գույք, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

20. Կազմակերպությունը իրավունք ունի օրենքին, իր կանոնադրությանը համապատասխան, իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

21. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

22. Կազմակերպության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

23. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

## V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

24. Հիմնադիրը կարող է կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

25. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

26. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության սեփականից հանձնել վարձակալության:

Ամրացված գույքի վարձակալության ժամկետը 1 տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են, բացառությամբ ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարների, որոնք սահմանված կարգով մուծվում են ՀՀ պետական բյուջե:

Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

27. Հիմնադրի կողմից գույքը կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

28. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ դրանց նկատմամբ պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության տնօրինման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

## VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ և ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

29. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել մնադրի որոշմամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ախատեսված դեպքերում և կարգով:

30. Կազմակերպության լուծարման դեպքում պետական կազմակերպության՝ փականության իրավունքով պատկանող մնացած գույքը հանձնվում է հիմնադրին:

31. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100% պետական սնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

32. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել ամ լուծարվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: